

Կապիկի Ճաղիկ (Monkeypox)

1. Ի՞նչ է կապիկի ծաղիկ հիվանդությունը

Կապիկի ծաղիկը հազվադեպ հանդիպող հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկ վիրուսով վարակվելու հետևանքով: Այն սովորաբար հանդիպում է Կենտրոնական և Արևմտյան Աֆրիկայում և, որպես կանոն, չի հանդիպում Միացյալ Նահանգներում: Այնուամենայնիվ, վերջերս մի քանի երկրներում, ներառյալ Միացյալ Նահանգներում, որտեղ սովորաբար կապիկի ծաղիկ հիվանդության դեպքեր չեն արձանագրվում, արձանագրվել են կապիկի ծաղիկի բազմաթիվ դեպքեր:

2. Ինչպե՞ս է տարածվում կապիկի ծաղիկ հիվանդությունը

Կապիկի ծաղիկը փոխանցվում է, երբ մարդը շփվում է վիրուսակիր կենդանու կամ մարդու հետ՝ վարակված մարդու կողմից օգտագործվող նյութերի հետ շփման միջոցով (օրինակ՝ հագուստ կամ սպիտակեղեն) կամ շնչառական կաթիլների հետ երկարատև շփման հետևանքով: Վիրուսը սովորաբար ներթափանցում է օրգանիզմ վնասված մաշկի, շնչառական կաթիլների կամ յուրաքանչյուրի (աչքերի, քթի կամ բերանի) միջոցով: Այդ պատճառով վիրուսը կարող է փոխանցվել սեռական հարաբերության ընթացքում մաշկ-մաշկ շփման և այլ սեռական շփման միջոցով:

3. Որո՞նք են կապիկի ծաղիկ հիվանդության նշանները

Վաղ նշանները կարող են ներառել ջերմություն, թուլություն (ընդհանուր անհանգստություն), գլխացավ, ավշային հանգույցների այտուց և երբեմն հազ կամ կոկորդի ցավ: Այլ ախտանիշները ներառում են մկանային ցավեր, մեջքի ցավ, դող և սաստիկ հոգնածություն, որոնց հաջորդում է ցանր, որը սովորաբար առաջանում է դեմքին և տարածվում մարմնի այլ մասեր: Վարակները կարող են տևել երկուսից չորս շաբաթ: Իսկ որոշ մարդկանց մոտ ցանն առաջանում է ավշային հանգույցների այտուցման հետ միասին որը կարող է առաջանալ սեռական օրգանների շրջանում, կամ առանց այտուցման:

4. Ինչպե՞ս է այն բուժվում

Ներկայումս չկա կապիկի ծաղիկ հիվանդության հասանելի հատուկ բուժում: Դեղամիջոցները կարող են օգտագործվել՝ թեթևացնելու համար հիվանդության ախտանիշները: Որոշ դեպքերում կարող է կատարվել պատվաստում՝ վիրուսի հետ բարձր վտանգավորության շփումից հետո հիվանդությունը կանխելու համար:

5. Ինչպե՞ս կարող եք կանխել կապիկի ծաղիկը

- Խուսափել այնպիսի նյութերի հետ շփումից, ինչպիսիք են անկողնային պարագաները և հագուստեղենը, որոնց հետ շփվել է հիվանդ կենդանին կամ այս վիրուսով վարակված անձը
- Խուսափել այն մարդկանցից, որոնք կարող են վարակված լինել կամ վարակված են վիրուսով
- Խուսափել կենդանիների հետ շփումից, որոնք կարող են վարակված լինել վիրուսով (օրինակ՝ հիվանդ կամ սատկած կենդանիներ)
- Լվանալ ձեռքերը օճառով և ջրով կամ օգտագործել ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչ վարակված կենդանիների կամ մարդկանց հետ շփվելուց հետո:


Չկա հատուկ բուժում, որը հաստատված է այս վիրուսի բուժման համար, սակայն կարող են տրվել դեղամիջոցներ՝ ախտանիշները մեղմելու համար: Սակայն, կա պատվաստանյութ, որը կարող է կիրառվել որոշ հանգամանքներում՝ կանխելու կապիկի ծաղիկ հիվանդությունը մարդկանց մոտ՝ ելնելով վիրուսի հետ շփման իրենց մակարդակից:

6. Ի՞նչ է այս պահին տեղի ունենում կապիկի ծաղիկի հետ

Տվյալ պահին կա միջազգային բռնկում, որը կապված չէ կենդանիների կամ այնպիսի վայր ճանապարհորդության հետ, որտեղ այս հիվանդությունն ավելի տարածված է: ԱՄՆ-ի բազմաթիվ տարածքներում հայտնաբերվել են դեպքեր, ներառյալ Կալիֆորնիայում հայտնաբերված դեպքերը: Միացյալ Նահանգներում հայտնաբերված բոլոր դեպքերը, բացի մեկից, ունեցել են վերջերս կատարված ճանապարհորդություն: Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունը վերահսկում է այս իրավիճակը և նախագրուշացնում է բուժաշխատողներին, իսկ CDC-ն հետևում է խմբակային վարակման դեպքերին: Լոս Անջելեսի Շրջանում կապիկի ծաղիկ հիվանդության վերաբերյալ ամենավերջին տեղեկությունների համար այցելեք ph.lacounty.gov/media/Monkeypox/ կայքէջ:

7. Ի՞նչ պետք է անեն, եթե կարծում եմ, որ վարակվել եմ կապիկի ծաղիկ հիվանդությամբ

Իսնդրում ենք կապ հաստատել ձեր բուժաշխատողի հետ, եթե կարծում եք, որ ունեք կապիկի ծաղիկ հիվանդության նշաններ կամ ախտանիշներ:



Կարևոր Տեղեկություններ

- Կապիկի ծաղիկը հեշտությամբ չի փոխանցվում մի մարդուց մյուսին:
- Ներկայումս չկա հատուկ բուժում, որը հաստատված է կապիկի ծաղիկ վիրուսի դեմ, սակայն որոշ դեղամիջոցներ կարող են օգտագործվել ախտանիշները մեղմելու համար:
- Կապիկի ծաղիկը կանխելու համար խուսափեք այն կենդանիների կամ մարդկանց հետ շփումից, որոնք կարող են կրել վիրուսը, խուսափեք այնպիսի նյութերի հետ շփումից, որոնք շփվել են հիվանդ կենդանու կամ մարդու հետ և վարակված կենդանիների կամ մարդկանց հետ շփվելուց հետո ապահովեք ձեռքերի լավ հիգիենա:

Որտեղի՞ց կարող է հանրությունը ավելի շատ տեղեկություններ ստանալ

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն
Կապիկի Ծաղիկ
ph.lacounty.gov/media/Monkeypox/

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ
Կապիկի Ծաղիկ
cdc.gov/poxvirus/monkeypox/index.html

